


Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Նախընտրելի
տղան ծառայ
կը դառնայ



Written by: Edward Hughes

Illustrated by: Byron Unger; Lazarus

Adapted by: M. Kerr; Sarah S; Alastair P.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

BFC

PO Box 3

Winnipeg, MB R3C 2G1

Canada

©2020 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.




Իսահակ շատ ուրախ էր: Իր տղան Յակոբը տուն դարձաւ: Թէեւ Եսաւ իբր եղբայր լաւ ընդունեց, սակայն ան երդում ըրած էր, որ օրին մէկը զայն սպաննէ: Բայց Յակոբին զաւակները ուրախ չէին, որովհետեւ Յովսէփը, իրենց նորաստի եղբայրը իրենց հօրը նախընտրեալն էր:




Յովսեփին եղբայրները անելի զայրացան երբ
ան իր երազը պատմեց: "Իմ հատիկի խուրճը
բարձր կեցած էր եւ իմ եղբորս հաւաքեալները
խոնարհուեցան իբր յարգանք" ըսաւ Յովսեփ:

Այս կը նշանակեր, թէ


Յովսեփ շատ անելի
կարեւոր պիտի
ըլլայ քան իր
եղբայրները:




Յովսէփին
երկրորդ երազը,
արեւը, լուսինը եւ
աստղերը իրեն առջեւ
խոնարհեցան: Նոյնիսկ
իւր հայրը Յովսէփ
շատ բարկացաւ իւր
վրայ, որ ինքզինք կը
գերադասէ, իւր ծնողքին
եւ եղբայրներուն վրայ:




Օրին մէկը Յակոբ Յովսէփը դաշտ ղրկեց, որ իր եղբայրները հսկեն իրենց հոտերը: Եղբայրները տեսան որ կու գայ: "Ելլենք սպաննենք այս երագողը", իրենք իրենց մինչեւ մրմռացին: Յովսէփ չէր գիտեր, թէ ինչ վարմունք գինք կը սպասէ:




Ռիւպէն, անդրանիկ եղբայրը հակառակեցաւ:
"Պետք չէ արիւն թափենք", ըսաւ ան: "Նայեցէ՛ք,
հոն փոս կայ: Թող որ հոն մեռնի" Ռիւպէն
ծրագրեց ազատել Յովսէփը իրիկնամուտին:



Երբ Յովսեփ
հասաւ, իր
եղբայրները
բռնեցին զինք
եւ գունաւոր
վերարկուն
հանեցին անոր
վրայէն, զոր իրենց
հայրը հագցուցած
էր իբրեւ
նախընտրեալ
որդին: Ետքը
զինք նետեցին
սաստկալի
փոսի մը մէջ:




Ռիւպէն ուղտերու շարան մը
տեսաւ, որ կ'անցնէր մօտերէն
եւ դէպի Եգիպտոս կ'ուղղուէր:
"Եկէք ծախենք Յովսէփը",
ըսաւ Յուդա, իր եղբայրը:
Համաձայնութիւնը կայացաւ:




Անոնք
Յովսէփը 20
արծաթ դրամի
ծախեցին:



Արցունքով եւ վախով լեցուն
անօգնական կը դիտէր
հեռացող ուղտերը, զոր
զինք կը տանէին իր հողէն եւ
ընտանիքէն հեռու:






"Ասի՞ Է Յովսէփին վերարկուն,
արիւնտտ Է: Անապատին մէջ
գտանք": Անխիղճ եղբայրները
այդպէս ձգեցին, որ Յակոբ
հաւատայ, որ վայրի
գազան մը մեռցուցած
էր նախընտրեալ որդին:
Յակոբ փզկտեց իր
հագուստները եւ սուգի
մէջ ինկաւ: Որեւէ մէկը
չէր կրնար գիտք
մխիթարել:




Եգիպտոսի մէջ, Յովսէփ առանձին եւ վախի
մէջ էր: Թերեւս ան իր տունը կը կարօտնար:
Բայց չէր կրնար փախչիլ: Ան ծառայ դարձած





էր Պետափրէսի տան մէջ,
որ կարելոր եգիպտացի
մըն էր: Պետափրէսի
տեսաւ, որ Յովսէփ
միշտ տքնաջան
կ'աշխատի եւ ինք
անոր կրնայ վստահիլ:



"Ինչ որ կ'ընես շատ լաւ կ'ըլլայ":
Օրին մէկը Պետափրէս ըսաւ
Յովսէփին. "Աստուած հետդ
է: Կ'ուզեմ, որ դուն ըլլաս իմ
սպասաւորներուն մէծը եւ
ամէն իմ վաճառականութեանս
պատասխանատուն եւ ամէն իմ
սպասաւորներուն պետը":



Աստուած Պետափրէսին լաւ հունձք տուաւ
եւ շատ հարստութիւններ Յովսէփին
համար: Հիմա Յովսէփ
կարելոր մարդ էր, ան
տակաւին Աստուծոյ
կը վստահէր եւ ամէն
սիրտով Անոր կը
ծառայէր: Սակայն
Յովսէփ բաղձանք
մը ունէր:



Պետափրեսին կինը գեշ կին մըն էր: Ան Յովսէփէն պահանջեց, որ իր ամուսնոյն տեղը առնէ: Յովսէփ մերժեց: Ան մեղք չէր գործեր Աստուծոյ դէմ Պետափրեսին սխալ գործելով:





Երբ կինը փորձեց
բռնի ուժով: Ան
փախաւ: Սակայն
կինը փռնեց անոր
եւ առաւ անոր
վերարկուն:



"Քու գերիդ վրաս յարձակեցաւ", գանգատեցաւ
Պետափրեսին կինը: "Նայէ այս է իր վերարկուն":
Պետափրես շատ զայրացաւ: Թերեւս ան գիտէր,
որ իր կինը սուտ կը խօսի:

Սակայն բան մը
պիտի ընէր:
Ի՞նչ կրնար
ընել:





Պետափրես Յովսէփը
բանտարկեց: Թէւ ան
անմեղ էր, Յովսէփ, ոչ
բարկացած էր, ոչ ալ տխուր:
Թերեւս ան կը սորվէր, թէ

որքան ալ դժուար ըլլայ եւ ուր
որ ալ գտնուի, եթէ ան մեծարե
Աստուծոյ, Աստուած ալ իրեն

պատիւ պիտի ընէր,
նոյնիսկ բանտին մէջ:



Նախընտրելի տղան ծառայ կը դառնայ


Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ծննդոց 37, Ծննդոց 39

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130





Կերջ



7



60



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի եւս ինչ վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուն համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ Գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

